

Կապիտալ  
ասեթ  
մենեջմենթ

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**2014թ. Տարեկան Հաշվետվություն**

## Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը	Էջ 3
2014թ. ներդրումային ռազմավարությունը և կապիտալի շուկաների բնութագիրը	Էջ 4-7
Կառավարվող Ֆոնդերի կատարողականը և ֆինանսական տեղեկատվություն	Էջ 8-11
«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	Էջ 12-59



Կապիտալ  
ասեթ  
մենեջմենթ

## Ընթերցողներին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ընկերության կողմից կառավարվող ֆոնդերի փայտերերին

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը Ձեզ է ներկայացնում իր 2014թ. գործունեությունը ամփոփող հաշվետվությունը: Սույն հաշվետվությունը նպատակ ունի ներկայացնել մեր Ընկերության ինչպես նաև մեր կողմից կառավարվող ֆոնդերի գործունեության վերաբերյալ ֆինանսական տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանի համար:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն Հայաստանում գրանցված առաջին ներդրումային և կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող ընկերությունն է: Ստեղծման օրվանից «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն ներդրումային և կենսաթոշակային գործիքներ է առաջարկում հայաստանյան և արտասահմանյան ներդրողներին: Շուկայում ներկայացված լինելով ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդի և երկու կամավոր կենսաթոշակային ֆոնդերի՝ ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդերի միջոցով մենք փորձում ենք ներդրողների համար ապահովել բանկային ավանդների և այլ ներդրումային գործիքներին արժանի այլընտրանք:

2013թ. ընթացքում մենք հիմնել ենք երկու կամավոր կենսաթոշակային ֆոնդ: Սակայն կենսաթոշակային ֆոնդերի հայեցակարգը դեռևս նոր է Հայաստանում, բավականաչափ դժվար է հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնել ֆոնդերի գործիքների վերաբերյալ և շուկա հանել դրանք: 2014 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխությունների և գործատուների ու կենսաթոշակային պլանների մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդերին հատկացումներ անելու պատրաստակամության բացակայության արդյունքում ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդերի համար էական ծավալի ակտիվներ ներգրավել դեռևս չի հաջողվել: Չնայած կառավարվող ակտիվների փոքր ծավալներին, և 2014 թվականի վերջին եռամսյակում ՀՀ ֆինանսական շուկայում արձանագրված էական անկման ԿԱՄավոր 1-ը և ԿԱՄավոր 2-ը կարողացել են ապահովել եկամտաբերություն նաև 2014 թվականի ընթացքում: ԿԱՄավոր 1-ի և ԿԱՄավոր 2-ի եկամտաբերությունը ստեղծման պահից միջին տարեկան եկամտաբերությունները կազմել է 5.06% and 4.19% համապատասխանաբար:

2014 թվականի նոյեմբերից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների շեշտակի աճը և գների անկումը բացասաբար անդրադարձավ ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդի եկամտաբերության վրա: Այնուամենայնիվ մեզ հաջողվել է նշված իրավիճակում ճիշտ կողմնորոշվել՝ կրել քիչ վնասներ, և A, B և C կարգի փայերի դասերի համար և եկամտաբերությունը 2014 թվականի համար չնվազեցնել տարեկան համապատասխանաբար 6.82%, 6.12% and 5.17%- ից:

Շնորհակալ ենք «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի հանդեպ ցուցաբերած վստահության համար: Մենք պատիվ ենք համարում մեր ջանքերը ձեր կենսաթոշակային ապահովության կարիքներին ծառայեցնելու հնարավորությունը և պլանավորում ենք աշխատել այդ ուղղությամբ նաև ապագայում:

Հարգանքով՝

Հիլսավոր գործադիր տնօրեն,  
Ալիկ Առաքելյան

## «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ»-ի կամավոր կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերը

2014թ դեկտեմբերի 31-ին ավարտվող ֆինանսական տարվա դրությամբ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ»-ն ուներ իր կողմից կառավարվող երեք ֆոնդեր, յուրաքանչյուրը իրեն առանձնահատուկ նպատակով և ռազմավարությամբ: Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերը ներառում են երկու կամավոր կենսաթոշակային ֆոնդ և մեկ ներդրումային ֆոնդ, որոնց ռազմավարությունը և նպատակները ներկայացված են ստորև:

### Շուկայի նկարագիր

2014 թվականի առաջին կիսամյակում պահպանվեց ՀՀ արժեթղթերի շուկայում 2013թ. տարեվերջին արձանագրված տոկոսադրույքների ցածր մակարդակը: 2014 թվականի երկրորդ կիսամյակից սկսած նկատվեց տոկոսադրույքների նվազման կանգ, իսկ որոշ դեպքերում նաև տոկոսադրույքների աճ, սակայն ոչ էական: 2014 թվականի հոկտեմբերից սկսեց արժեզրկվել հայկական դրամը, և դեկտեմբերի գրանցվեց ՀՀ դրամի 15% արժեզրկում: Այդ իրավիճակում ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման շրջականերում բարձրացվեցին ռեպո և լումբարդային վարկի տոկոսադրույքները: Այդ հանգամանքները, ինչպես նաև ՀՀ դրամի նկատմամբ առաջացած անվստահությունը հանգեցրեց ՀՀ արժեթղթերի շուկայում տոկոսադրույքների զգալի աճի: Որպես ՀՀ պետական արժեթղթերի շուկայի բնութագրիչ կարող ենք վերցնել ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող և հրապարակվող GMI պետական պարտատոմսերի ինդեքսը, որը 2014 թվականի դեկտեմբերին արձանագրել է մոտ 9.4% անկում:

ՀՀ պետական պարտատոմսերի այդ շեշտակի անկումն իր ազդեցությունը թողեց նաև ակտիվների այլ դասերի, մասնավորապես կորպորատիվ արժեթղթերի վրա: Կորպորատիվ արժեթղթերի շուկայում նույնպես արձանագրվեց տոկոսադրույքների որոշակի աճ, ինչն առավել քիչ արտահայտվեց ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դեպքում:

ՀՀ դրամի/ԱՄՆ դոլարի փոխարժեքի տեսանկյունից շուկայում տարածաշրջանային զարգացումների, ՌԴ ֆինանսական շուկայի անկման ազդեցության ներքո 2014 թվականի վերջում ունեցանք ՀՀ դրամի մոտ 15% արժեզրկում, ինչ բացասական անդրադարձավ ինչպես ընդհանուր ՀՀ արժեթղթերի շուկայի, այնպես էլ մեր կողմից կառավարվող ֆոնդերի եկամտաբերության վրա:

## Կամավոր կենսաթոշակային ֆոնդեր

### Ներդրումների նպատակներ

**ԿԱՄավոր 1:** ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի նպատակը կայուն աճի և եկամտաբերության ապահովումն է բարձրակարգ, կայուն եկամտային արժեթղթերի մեջ ներդրման միջոցով: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել կայուն եկամտային արժեթղթերում, ներառյալ՝ պետական, կորպորատիվ և համայնքների կողմից թողարկված արժեթղթերում: Ֆոնդի ներդրումները կարող են նաև կատարվել բանկային ավանդներում՝ ֆոնդի ակտիվների մինչև 20%-ի չափով, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում ֆոնդի ակտիվների մինչև 25%-ի չափով: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են նաև ներառել արտասահմանյան արժեթղթեր՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումներ արտարժույթով ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով:

**ԿԱՄավոր 2:** ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդի նպատակը կայուն աճի և եկամտաբերության ապահովումն է բարձրակարգ, կայուն եկամտային և բաժնային արժեթղթերի մեջ ներդրման միջոցով: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել կայուն եկամտային արժեթղթերում, ներառյալ՝ պետական, կորպորատիվ և համայնքների կողմից թողարկված, ինչպես նաև բաժնային արժեթղթերում: Ֆոնդի ներդրումները կարող են նաև կատարվել բանկային ավանդներում՝ ֆոնդի ակտիվների մինչև 20%-ի չափով, բաժնային արժեթղթերում՝ ֆոնդի ակտիվների մինչև 25%-ի չափով, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում՝ ֆոնդի ակտիվների մինչև 25%-ի չափով: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են նաև ներառել արտասահմանյան արժեթղթեր՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումներ արտարժույթով ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով:

### Պորտֆելների նկարագիր

#### ԿԱՄավոր 1

Չափի ամենելով Կամավոր 1 ֆոնդի երկարաժամկետ ներդրումային հորիզոնը, ներդրումային որոշումներ կայացնելիս կիրառվում է «զնել-և-պահել» (buy-and-hold): Այդ պատճառով 2014թ.-ին ֆոնդի ներդրումային քաղաքականությունը հիմնվեց տարատեսականացման ընդլայնման վրա՝ տարվա վերջում ֆոնդում եղած արժեթղթերի թիվը հասցնելով 9-ի: Տարատեսականացումը ուղղվեց ինչպես արժեթղթերի դասի (պետ.պարտատոմս, կորպորատիվ) այնպես էլ փոխարժեքի վրա:

Ֆոնդում եղած փոխարժեքային արժեթղթերը հնարավորություն տվեցին մեղմացնել պետական պարտատոմսերի գների կտրուկ անկման ազդեցությունը ֆոնդի եկամտաբերության վրա: Այնուամենայնիվ, ֆոնդը կրեց կորուստներ տարվա վերջին կիսամյակում:

**ԿԱՄԱՎՈՐ 2**

Հաշվի առնելով Կամավոր 2 Ֆոնդի երկարաժամկետ ներդրումային հորիզոնը, ներդրումային որոշումներ կայացնելիս կիրառվում է «գնել-և-պահել» (buy-and-hold): Այդ պատճառով 2014թ.-ին Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը հիմնվեց տարատեսականացման ընդլայնման վրա՝ տարվա վերջում Ֆոնդում եղած արժեթղթերի թիվը հասցնելով 9-ի: Տարատեսականացումն ուղղվեց ինչպես արժեթղթերի դասի (պետական պարտատոմս, կորպորատիվ) այնպես էլ փոխարժեքի վրա:

Ֆոնդում եղած փոխարժեքային արժեթղթերը հնարավորություն տվեցին մեղմացնել պետական պարտատոմսերի գների կտրուկ անկման ազդեցությունը Ֆոնդի եկամտաբերության վրա: Այնուամենայնիվ, Ֆոնդը կրեց կորուստներ տարվա վերջին կիսամյակում:

**Ներդրումների արդյունքներ**

Եկամտաբերության ընդհանուր ցուցանիշներ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված համար:

	<b>ՄԵԿ ՏԱՐԻ*</b>	<b>ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՑ*</b>
<b>ԿԱՄԱՎՈՐ 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ</b>	5.06%	20.25%
<b>ԿԱՄԱՎՈՐ 2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ</b>	4.19%	25.10%

*Համաձայն Ֆոնդի կանոնների, Կառավարիչը Ֆոնդի հիմնադրումից հետո երեք տարվա ընթացքում պարտավոր է սահմանել և ներկայացնել այն համեմատական ուղենիշը, որի հիման վրա փայտերերը պետք է հնարավորություն ունենան գնահատել Ֆոնդի եկամտաբերության մակարդակը՝ համեմատական ուղենիշների հիման վրա: Այդ համեմատական ուղենիշը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով համանման գործիքների (ցուցանիշների) համար գործող չափանիշները՝ հաշվի առնելով ռիսկերի, եկամտաբերության, տարբեր ակտիվների խմբի ժամկետայնությունը: Սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ ուղենիշը մշակման փուլում է:*

*Վերը նշված արդյունքները հիմնված են ակտիվների զուտ արժեքի վրա և ենթադրում են բաշխման ենթակա շահույթի կրկին ներդրում (եթե այդպիսին կա):*

**Նախկին ցուցանիշները ՉԵՆ Նշանակում, որ դրանք շարունակվելու են ապագայում:**

**Ներդրումային Ֆոնդ**

**Ներդրումների նպատակներ**

**ԿԱՍ Պետական Արժեթղթերի Ֆոնդի** նպատակը ընթացիկ եկամտի և կայուն աճի ապահովումն է ՀՀ պետական պարտատոմսերի կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջովին երաշխավորված պարտատոմսերի մեջ ներդնելու միջոցով: Ֆոնդը նպատակահարմար է պահպանողական ներդրողների համար, որոնք այնուամենայնիվ ցանկանում են ստանալ բարձր եկամտաբերություն և օգտվել Ֆոնդի ընձեռած բարձր իրացվելիությունից, առանց բարձր ռիսկերի: A դասը նախատեսված է երկարաժամկետ ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար (4 և ավելի տարի), B դասը՝ միջնաժամկետ ներդրումների (1-3 տարի), իսկ C դասը՝ կարճաժամկետ ներդրումների համար (մինչև 1 տարի):

**Պորտֆելի նկարագիր**

2014թ.-ի առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում տոկոսադրույքների ցածր մակարդակի պատճառով, Ֆոնդը ընտրեց համեմատաբար ավելի պահպանողական քաղաքականություն՝ անցում կատարելով ավելի կարճաժամկետ պարտատոմսերի: Դրա պատճառներից էր նաև

Եկամտաբերության կորի համեմատաբար հարթ լինելը: Սակայն ընդհանուր եկամտաբերությունը բարձրացնելու նպատակով, երկրորդ կիսամյակից սկսած, ԿԱՄ ՊԱՖ-ը սկսեց կնքել Ռեպո համաձայնագրեր մինչև ֆոնդի 10%:

Նման պահպանողական քաղաքականություն պահպանվեց մինչև տարվա վերջ: 2014թ. վերջին ամսիներին, ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույքերի բարձրացման և շուկայում ձևավորված պարտատոմսերի ցածր իրացվելիության պայմաններում անիմաստ դարձավ ռեպո դիրքերի շարունակումը: Այդ պատճառով, այդ դիրքերը փակվեցին և կնքվեցին հակադարձ ռեպո համաձայնագրեր շուկայում ձևավորված բարձր եկամտաբերությունից օգտվելու նպատակով:

**Ներդրումների արդյունքներ**

Եկամտաբերության ընդհանուր ցուցանիշներ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված համար:

	<b>ՄԵԿ ՏԱՐԻ*</b>	<b>ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՑ*</b>
<b>Դաս A</b>	6.82%	39.60%
<b>Դաս B</b>	6.12%	38.26%
<b>Դաս C</b>	5.17%	36.72%

*Համաձայն Ֆոնդի կանոնների, Կառավարիչը Ֆոնդի հիմնադրումից հետո մեկ տարվա ընթացքում պարտավոր է սահմանել և ներկայացնել այն համեմատական ուղենիշը, որի հիման վրա փայտաբերողը պետք է հնարավորություն ունենան գնահատել Ֆոնդի եկամտաբերության մակարդակը՝ համեմատական ուղենիշների հիման վրա: Այդ համեմատական ուղենիշը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով համանման գործիքների (ցուցանիշների) համար գործող չափանիշները՝ հաշվի առնելով ռիսկերի, եկամտաբերության, տարբեր ակտիվների խմբի ժամկետայնությունը: Սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ ուղենիշը մշակման փուլում է:*

*Վերը նշված արդյունքները հիմնված են ակտիվների զուտ արժեքի վրա և ենթադրում են բաշխման ենթակա շահույթի կրկին ներդրում (եթե այդպիսին կա):*

**Նախկին ցուցանիշները ՉԵՆ նշանակում, որ դրանք շարունակվելու են ապագայում:**

**Ճանոթագրություն կից ներկայացվող ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ**

**Ռիսկի գործոններ:** Ֆոնդի ներդրումները և ներդրումները արժեթղթերում, ենթարկված են տարաբնույթ շուկայական ռիսկերի, և առկա չէ որևէ երաշխիք կամ հավաստիացում այն մասին, որ ֆոնդերը չեն կրի կորուստներ, կամ որ ֆոնդերը կհասնեն իրենց առջև դրված նպատակներին: Ինչպես ցանկացած արժեթղթի դեպքում, այնպես էլ ֆոնդի կողմից թողարկված փայտի զուտ ակտիվների արժեքը կարող է աճել կամ նվազել՝ պայմանավորված զանազան գործոններով և կապիտալ շուկաների վրա ազդող ուժերի ազդեցությամբ: Նախկին ցուցանիշները ՉԵՆ նշանակում, որ դրանք շարունակվելու են ապագայում: Ֆոնդի ներդրողներին չի առաջարկվում երաշխավորված եկամտաբերության ցուցանիշ: ԿԱՄավոր 1, ԿԱՄավոր 2 և ԿԱՄ ՊԱՖ-ը իրենցից ներկայացնում են ֆոնդերի անվանումներ և որևէ կերպով չեն վկայում ֆոնդի որակի կամ դրա առաջիկա շահութաբերության մասին: Ֆոնդերը ներդրում են կատարում արժեթղթերում, որոնք ոչ միշտ են շահութաբեր, և առկա չէ երաշխիք, որ ֆոնդերում ներդրումները կապված չեն ռիսկերի հետ: Ֆոնդի արժեքը կարող է տատանվել արժեթղթերի շուկայի տատանումների, գերակայող քաղաքական, տնտեսական և սոցիալական պայմանների ազդեցությամբ, ինչպես նաև այլ գործոններից ելնելով՝ մասնավորապես հարկային օրենսդրության, իրացվելիության և այլ հարակից գործիքների, առևտրի ծավալների և այլ գործոնների ազդեցությամբ: Ֆոնդի գործունեության հետ առնչվող էական, հիմնարար գործոնների փոփոխությունները կարող են հանգեցնել նաև հարկային հետևանքների: Նման հարկի գծով պատասխանատվություն է կրում ներդրողը և ֆոնդը պատասխանատվություն չի կրում առաջացած հարկային պարտավորությունների համար: Խնդրում ենք դիմել ԸՆկերությանը՝ նրան բնորոշ ռիսկերի գործոններին ծանոթանալու համար:

**ԿԱՄԱՎՈՐ 1 կենսաթոշակային ֆոնդ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (տես ստորև ծանոթագրությունը)**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,364	1,170
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	9,428	2,991
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>10,792</b>	<b>4,161</b>
<b>Պարտավորություններ</b>		
Այլ կրեդիտորական պարտք	16	5
<b>Ընդամենը պարտավորություններ (առանց Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների)</b>	<b>16</b>	<b>5</b>
Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ՝ մեկ փայի դիմաց 1,203 դրամ արժեքով 8,961 վճարման ենթակա փայի պայմաններում (2013թ.՝ 1,145 դրամ արժեքով 3,631 վճարման ենթակա փայի պայմաններում)	10,776	4,156

**ՇԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ԶԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2013թ. ապրիլի 30-ից  
(ստեղծման ամսաթվից)  
մինչև 2013թ. դեկտեմբերի  
31-ն ընկած

(հազար դրամ)	2014թ.	Ժամանակահատված
Տոկոսային եկամուտ	753	98
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(448)	315
<b>Ընդամենը գործառնական եկամուտ</b>	<b>305</b>	<b>413</b>
Ներդրումային կառավարման վճարներ	(150)	(24)
Պահառուական վճարներ	(12)	(2)
Կոմիսիոն վճարներ	(7)	-
<b>Ընդամենը գործառնական ծախսեր</b>	<b>(169)</b>	<b>(26)</b>
<b>Գործառնական շահույթ</b>	<b>136</b>	<b>387</b>
Արտարժույթով գործառնականություններից զուտ օգուտ	237	-
<b>Ֆինանսական եկամուտ</b>	<b>237</b>	<b>-</b>
<b>Ժամանակաշրջանի շահույթ</b>	<b>373</b>	<b>387</b>
<b>Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>	<b>373</b>	<b>387</b>

**ՓԱՅԱՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

(հազար դրամ)	Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ
<b>Մնացորդը 2013թ. ապրիլի 30-ի (հիմնադրման ամսաթվի) դրությամբ</b>	<b>-</b>
Փայերի թողակումից մուտքեր	3,769
Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	387
<b>Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4,156</b>
Փայերի թողակումից մուտքեր	6,247
Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	373
<b>Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>10,776</b>



## ԿԱՄԱՎՈՐ 2 ԿԵՆՍԱԹՈՂԱԿԱԿԻՆ ՖՈՆԴ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (տես ստորև ծանոթագրությունը)**

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,226	841
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	4,534	1,849
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>5,760</b>	<b>2,690</b>
<b>Պարտավորություններ</b>		
Այլ կրեդիտորական պարտք	8	3
<b>Ընդամենը պարտավորություններ (առանց Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների)</b>	<b>8</b>	<b>3</b>
Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ՝ մեկ փայի դիմաց 1,251 դրամ արժեքով, 4,598 վճարման ենթակա փայի պայմաններում (2013թ.՝ 1,201 դրամ արժեքով՝ 2,238 վճարման ենթակա փայի պայմաններում)	5,752	2,687

### ՇԱՐՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ԶԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)	2014թ.	2013թ. ապրիլի 30-ից (ստեղծման ամսաթվից) մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված
Տոկոսային եկամուտ	381	92
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(244)	293
<b>Ընդամենը գործառնական եկամուտ</b>	<b>137</b>	<b>385</b>
Ներդրումային կառավարման վճարներ	(87)	(19)
Պահառուական վճարներ	(7)	(1)
Կոմիսիոն վճարներ	(6)	-
<b>Ընդամենը գործառնական ծախսեր</b>	<b>(100)</b>	<b>(20)</b>
<b>Գործառնական շահույթ</b>	<b>37</b>	<b>365</b>
Արտարժույթով գործառնականություններից զուտ օգուտ	114	-
<b>Ֆինանսական եկամուտ</b>	<b>114</b>	<b>-</b>
<b>Ժամանակաշրջանի շահույթ</b>	<b>151</b>	<b>365</b>
<b>Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>	<b>151</b>	<b>365</b>

### ՓԱՅԱՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)	Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ
<b>Մնացորդը 2013թ. ապրիլի 30-ի (հիմնադրման ամսաթվի) դրությամբ</b>	<b>-</b>
Փայերի թողակումից մուտքեր	2,322
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	365
<b>Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,687</b>
Փայերի թողակումից մուտքեր	2,914
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	151
<b>Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5,752</b>

**ԿԱՄ Պետական Արժեթղթերի Ֆոնդ**  
**ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (տես ստորև ծանոթագրությունը)**

<b>ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</b> (հազար դրամ)	<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
<b>Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	499	158
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	395,897	76,578
<b>ԸՆդամենը ակտիվներ</b>	<b>441,652</b>	<b>-</b>
<b>Ակտիվներ</b>	<b>441,652</b>	<b>76,736</b>

<b>Պարտավորություններ</b>		
Վճարման ենթակա շահութահարկ	34	3
Այլ կրեդիտորական պարտք	385	83
<b>ԸՆդամենը պարտավորություններ (առանց Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների)</b>	<b>419</b>	<b>86</b>
<b>Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ՝ մեկ փայի դիմաց 1,396, 1,383 և 1,367 դրամ արժեքով համապատասխանաբար 224,763 A դասի, 5,296 B դասի և 87,882 C դասի վճարման ենթակա փայերի պայմաններում (2013թ. դեկտեմբերի 31-ին՝ մեկ փայի դիմաց 1,307, 1,303 և 1,300 դրամ արժեքով 5,814 A դասի, 5,993 B դասի և 47,112 C դասի վճարման ենթակա փայերի պայմաններում)</b>	<b>441,233</b>	<b>76,650</b>

**ՇԱՐՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ Լ և ԱՅԼ ԶԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ. ապրիլի 30-ից (ստեղծման ամսաթվից) մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված</b>
Տոկոսային եկամուտ	37,149	2,980
Ֆինանսական ծախսեր	(1,775)	-
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(12,794)	11,688
<b>ԸՆդամենը գործառնական եկամուտ</b>	<b>22,580</b>	<b>14,668</b>
Այլ եկամուտ	3	-
Ներդրումային կառավարման վճարներ	(3,583)	(379)
Պահառուական վճարներ	(523)	(37)
Կոմիսիոն վճարներ	(98)	(3)
<b>ԸՆդամենը գործառնական ծախսեր</b>	<b>(4,201)</b>	<b>(419)</b>
<b>Չուտ եկամուտ նախքան շահութահարկի գծով ծախսը</b>	<b>20,119</b>	<b>14,249</b>
Շահութահարկի գծով ծախս	(35)	(3)
<b>Ժամանակաշրջանի շահույթ</b>	<b>18,344</b>	<b>14,246</b>
<b>Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ</b>	<b>18,344</b>	<b>14,246</b>

**ՓԱՅԱՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

<b>(հազար դրամ)</b>	<b>Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ</b>
<b>Մնացորդը 2013թ. ապրիլի 30-ի (հիմնադրման ամսաթվի) դրությամբ</b>	<b>-</b>
Փայերի թողակումից մուտքեր	62,404
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	14,246
<b>Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>76,650</b>

**Փայատերերի կողմից թողարկումներ և մարումներ**

Փայերի թողակումից մուտքեր	494,030
Փայերի մարման վճարներ	(147,791)
Փայերով գործարքներից զուտ աճ	346,239
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում	18,344
<b>Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>441,233</b>

## **Ճանապարհորդություն վերնում ներկայացված ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ**

Վերնում ներկայացված ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը պատրաստվել է ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդի և ԿԱՄ Պետական Արժեթղթերի Ֆոնդի 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Լինելով ամփոփ և խմբավորված՝ սույն ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը չի կարող լիակատար պատկերացում ապահովել ֆոնդերի ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ: ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդի և ԿԱՄ Պետական Արժեթղթերի Ֆոնդի ամբողջական աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները հասանելի են ըստ պահանջի՝ ֆոնդերի կառավարչին դիմելու միջոցով և նրանց հրապարակային կայքում:

## Բովանդակություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ.....	13
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	14
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ.....	16
ՇԱՐՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	17
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	19
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ.....	19
2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	20
1. Հաշվետու ընկերությունը.....	20
2. Պատրաստման հիմունքները.....	22
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն.....	24
4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը... ..	33
5. Ռիսկերի կառավարում.....	43
6. Ֆոնդերի կառավարման գործունեությունը.....	50
7. Տոկոսային եկամուտ և տոկոսային ծախս.....	51
8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով գուտ օգուտ.....	51
9. Կոմիսիոն եկամուտ.....	51
10. Վարչական ծախսեր.....	51
11. Շահութահարկ.....	52
12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	53
13. Պահանջներ բանկերի նկատմամբ.....	53
14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ.....	53
15. Հիմնական միջոցներ.....	54
16. Այլ ակտիվներ.....	54
17. Բաժնետիրական կապիտալ.....	55
18. Այլ պարտավորություններ.....	55
19. Գործարքներ կապակցված կողմերի հետ.....	55
20. Ֆինանսական գործիքների իրական արժեք.....	57

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ  
ԱՎԱՐՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն կամ ԿԱՍ) 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝


- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները հասկանան որոշակի գործարքների էությունը, Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումներն ու դրույթները և
- Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքն ապահովելու կարողության գնահատման համար:


Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, իրականացման և պահպանման համար,
- համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն արտացոլելու և բացահայտելու Ընկերության գործառնությունները և ցանկացած ժամանակ խելամիտ ճշգրտությամբ բացահայտելու Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռնեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար և
- խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2015 թվականի ապրիլի 27-ին:

Ստորագրված է ղեկավարության անունից՝

  
**Արմկ Առաքելյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն

  
**Կարեն Խաչատրյան**  
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ»  
ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

Կապիտալ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ  
27 ապրիլի 2015թ.

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2014թ. դրությամբ, 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

### **Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

**Արթուրի Հակոբյան**  
Գործադիր տնօրեն

Դեկտյբ Արմենիա ՓԲԸ  
27 ապրիլի, 2015թ.



**Արփինե Ղևոնդյան**  
Աուդիտի ղեկավար

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

(հազար դրամ)	Նճան.	31 դեկտեմբերի, 2014թ. դրույթամբ	31 դեկտեմբերի, 2013թ. դրույթամբ
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	3,485	1,915
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	14		
- Ընկերության կողմից պահվող		46,857	96,215
- Հետգնման պայմանագրերով գրավադրված		-	30,799
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով ստացվելիք միջոցներ	19	147,969	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	-	100,855
Հիմնական միջոցներ	15	9,393	10,215
Ոչ նյութական ակտիվներ		1,386	1,659
Հետաձգված հարկային ակտիվներ	11	612	216
Այլ ակտիվներ	16	2,793	2,617
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>212,495</b>	<b>244,491</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<b>Կապիտալ և պահուստ</b>			
Բաժնետիրական կապիտալ	17	210,000	210,000
Զբաղիչված շահույթ		(1,571)	982
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>208,429</b>	<b>210,982</b>
<b>Պարտավորություններ</b>			
Պարտավորություններ հետգնման պայմանագրերով	14	-	30,726
Վճարման ենթակա գումարներ և հաշվեգրված ծախսեր	18	4,066	2,783
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>4,066</b>	<b>33,509</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>212,495</b>	<b>244,491</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2015թ. ապրիլի 27-ին:

**Ալիկ Առաքելյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն



**Կարեն Խաչատրյան**  
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ»  
ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ



**ՇԱՐՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

<b>(հազար դրամ)</b>	<b>Ճան.</b>	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
<b>Ֆոնդի կառավարման գործունեություն</b>			
Հասույթ	6	3,820	422
<b>Ֆինանսական եկամուտ</b>			
Տոկոսային եկամուտ	7	22,195	26,895
Տոկոսային ծախս	7	(1,220)	(3,901)
Չուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	8	10,445	23,075
Կոմիսսիոն եկամուտ	9	11,972	195
Կոմիսսիոն ծախս		(117)	(106)
Այլ գործառնական եկամուտ		213	-
<b>Չուտ ֆինանսական եկամուտ</b>		<b>47,308</b>	<b>46,580</b>
Վարչական ծախսեր	10	(50,257)	(42,606)
<b>(Վնաս)/ շահույթնախքան հարկումը</b>		<b>(2,949)</b>	<b>3,974</b>
Շահութահարկի գծով օգուտ/ (ծախս)	11	396	(426)
<b>Ընդամենը տարվա (վնաս)/շահույթ և համապարփակ (վնաս)/եկամուտ</b>		<b>(2,553)</b>	<b>3,548</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2015թ. ապրիլի 27-ին:

**Ալիկ Առաքելյան**

Գլխավոր գործադիր տնօրեն




**Կարեն Խաչատրյան**

Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ


**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ.  
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

(հազար դրամ)	Նախ.	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
<b>Մնացորդը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ</b>		210,000	(2,566)	207,434
Ընդամենը տարվա շահույթ և համապարփակ եկամուտ		-	3,548	3,548
<b>Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	17	210,000	982	210,982
Ընդամենը տարվա վնաս և համապարփակ վնաս		-	(2,553)	(2,553)
<b>Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	17	210,000	(1,571)	208,429

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2015թ. ապրիլի 27-ին:

  
**Ալիկ Առաքելյան**  
 Գլխավոր գործադիր տնօրեն



  
**Կարեն Խաչատրյան**  
 Գլխավոր հաշվապահ, «ԷՅ-ԷՆ աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ


**ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

<b>(հազար դրամ)</b>	<b>Նճան.</b>	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>			
Ստացված ֆոնդի կառավարման միջնորդավճարներ		3,652	356
Ստացված տոկոսներ		8,259	26,407
Վճարված տոկոսներ		(1,318)	3,803
Վճարված կոմիսիոն վճարներ		(21)	(106)
Ստացված կոմիսիոն վճարներ		11,972	195
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում		(124,354)	(62,106)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից և մարումից հասույթ		82,032	50,518
Հետզնման պայմանագրերի գծով ստացված միջոցներ		-	70,298
Հետզնման պայմանագրերի գծով վճարված միջոցներ		(30,688)	(39,671)
Աշխատավարձ և համանման վճարումներ		(25,710)	(20,212)
Վճարված կանխավճարներ, գործառնական և վարչական ծախսեր		(21,811)	(8,407)
<b>(Գործառնական գործունեությունում օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր</b>		<b>(97,987)</b>	<b>13,469</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>			
Բանկերում ներդրված ավանդներ		-	(100,000)
Բանկերում ներդրված ավանդների մարում		100,000	100,000
Հիմնական միջոցների ձեռքբերում		(369)	(10,704)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(74)	(1,380)
<b>Ներդրումային գործունեությունից ստացված/ (ներդրումային գործունեությունում օգտագործված) զուտ դրամական հոսքեր</b>		<b>99,557</b>	<b>(12,084)</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		1,570	1,385
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		1,915	530
Արտարժույթի փոխարժեքների տատանման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		-	-
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին</b>	<b>12</b>	<b>3,485</b>	<b>1,915</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2015թ. ապրիլի 27-ին:

  
**Արիկ Առաքելյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն



  
**Կարեն Խաչատրյան**  
Գլխավոր հաշվապահ, «ԷՅ-ԷՆ աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

## 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶԱՇԿԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Հաշվետու ընկերությունը

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գրանցված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող առաջին ընկերությունն է: Ընկերության հիմնադրման ամսաթիվն է՝ 2012թ. հոկտեմբերի 18-ը. այն գրանցվել է ՀՀ Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ՝ ստանալով թիվ 1 Լիցենզիան: Ընկերության գրանցման հասցեն է՝ Խորենացու 15, 5-րդ գրասենյակ, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է պրն. Տիգրան Կարապետյանի վերջնական վերահսկողության տակ գտնվող «Կապիտալ Ինվեսթմենթս» ֆինանսական հոլդինգային ընկերության դուստր ընկերություն:

Ընկերությունն իրականացնում է ֆոնդերի կառավարում՝ առաջարկելով ակտիվների կառավարման լուծումներ, այդ թվում՝ առանձին կառավարվող հաշիվներ, անձնական խորհրդատվություն հատուկ մշակված պորտֆելների գծով և մասնագիտացված պլանավորում և պորտֆելների մշտական կառավարում: Ընկերությունը կառավարում է է հետևյալ բաց կամավոր կենսաթոշակային և ներդրումային հիմնադրամները

- ԿԱՄ Պետական Արժեթղթերի Ֆոնդ
- ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄավոր 2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

Միջինում՝ 2014թ. Ընկերությունն ունեցել է 6 աշխատակից: (2013թ.՝ 7):

### Գործարար միջավայրը

Կարգավորող մարմինները վերահսկում են Ընկերության գործունեության տարաբնույթ ոլորտները, և կարող են իրականացնել ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառնությունները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

### Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ-ում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր

մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ընկերության ակտիվները հիմնված են ՀՀ-ում: Չարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները: Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի ներդրումային միջավայրի, և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Ընկերության ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայում, կանոնակարգային դաշտում և աշխարհաբաղաբալական այլ փոփոխությունները, որոնք բոլորն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության նկատմամբ, և դուրս են Ընկերության վերահսկողությունից: Վարկային շուկաների իրադրության վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքների և արժեթղթերի գնահատումներում նվազումները բացասական ազդեցություն ունեն փայտերերին վերագրելի գուտ ակտիվների արժեքի վրա:

Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Համաշխարհային ֆինանսական ցնցումները, որոնք 2009 և 2010թթ. բացասաբար ազդեցին ՀՀ ֆինանսական և կապիտալի շուկաների վրա, նահանջել են, և ՀՀ տնտեսությունը նորից սկսել է աճ ցուցաբերել հետճգնաժամային շրջանում՝ 2011 և 2012թթ.: Այնուամենայնիվ, որոշակի էական անորոշություններ դեռևս առկա են: Դեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական ոլորտի, և տնտեսության վրա ընդհանուր առմամբ, և հետևաբար, չի կարող կանխատեսել այն ազդեցությունը որ այդ փոփոխությունները կարող են ունենալ Ընկերության գուտ ակտիվների արժեքի վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատումներից:

Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Ընկերությունը ենթակա է կառավարական, վերահսկող և մարմինների կողմից կանոնակարգման (մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկի): Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Կառավարիչը նաև ենթակա է կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պատավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայատման ինչպես նաև կեղծիքից պաշտանվածության ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ներդնեն փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառնությունները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են, և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ընկերության հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանությունն այդ կանոնակարգային պահանջների հետ: Ղեկավարության կողմից սահմանվել են քաղաքականություններ և ընթացակարգեր այդ կանոնակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

### **Ֆոնդի կառավարումը**

Ընկերությունը ղեկավարում և իրականացնում է ֆոնդերում պահվող փայերի և այլ ներդրումային գործիքների վարչարարությունը՝ ներդրողների անունից: Այդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները չեն ներառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը վերահսկում է տվյալ կառույցը և համախմբման նկատառումները կիրառելի են դառնում՝ համաձայն հաշվետվությունների ներկայացման համապատասխան ստանդարտի պահանջների:

## **2. Պատրաստման հիմունքները**

### **ա. Համապատասխանության մասին հայտարարություն**

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՀՅՄՍ) համաձայն:

### **բ. Պատրաստման հիմունքները**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշակի ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեն չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով:

Ի լրումն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության եականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալները:

Ընկերությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական գրառումների հիման վրա և ճշգրտվել են՝ ՖՀՄՍ համապատասխանությունն ապահովելու համար:

Ընկերությունն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ճանոթագրություն 5-ում:

#### գ. Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

#### դ. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

#### ե. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար

վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին: Իրական արժեքի լավագույն վկայություն է հանդիսանում դրա գինը ակտիվ շուկայում: Շուկայում գնի բացակայության դեպքում Ընկերությունն օգտագործում է այլ գնահատման տեխնիկաներ, մասնավորապես՝ թե՛ արտաքին և թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

### **3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

#### **ա. Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

#### **բ. Տոկոս**

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ կամ վնասի միջոցով իրական արժեքով շահույթի չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները



գեղջում Է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Ղեկավարությունն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

#### **գ. Ակտիվների կառավարման գործունեություն և կոմիսիոն եկամուտ**

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային հիմնադրամների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման եւ վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունը նաև վաստակում է ակտիվների կառավարման վճարներ խորհրդատվական լուծումներ առաջադրելիս, որոնք ներառում են խորհրդատվական և հաշիվների կառավարման ծառայություններ: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

#### **դ. Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ**

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Ծահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, գեղջերը և Էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտաժույթի փոխարժեքային տարբերությունները, սակայն չի ներառում տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

#### ե. Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

#### զ. Ընկերությունը որպես վարձակալ

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

#### է. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չգեղջված հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայության տրամադրման դեպքում: Պարտավորությունը ճանաչվում է կարճաժամկետ դրամային պարզևավճարի տեսքով վճարվելիք գումարի գծով, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ վճարելու այդ գումարը աշխատակցին նախկինում մատուցված ծառայության դիմաց, և պարտավորությունը հնարավոր է արժանահավատորեն չափել:

#### ը. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

**Ընթացիկ հարկ.** ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարբերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարբերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

**Հետաձգված հարկ.** հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր

հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

**Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր.** ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

**Գործունեության հետ կապված հարկեր.** ՀՀ-ում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերություն գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

### Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական ակտիվներ.** ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և

նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.**

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՄՄ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես ծանոթագրություն 20):

**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.** Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների ամկայության), ողջ դասը կորակագրվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

**Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ.** Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ՝ գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ:

Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով: Իրական արժեքի փոփոխությունից օգուտը և վնասները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում են ներդրումների վերագնահատման պահուստում, բացառությամբ ոչ ժամանակավոր արժեքկման կորուստների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի, շահաբաժինների տեսքով եկամտի, դրամային ակտիվների դեպքում՝ արտարժույթի փոխարկումից օգուտի և վնասի, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այն դեպքում երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է արժեքկված, նախկինում ներդրումների վերագնահատման պահուստում կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

**Վարկեր և դեբիտորական պարտքեր.** Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը Էական ազդեցություն չէր ունենա:

**Արժեթղթերի հետզնման և հակադարձ հետզնման գործարքներ.** Իր գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետզնման պայմանագրեր (հետզնման), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր (հակադարձ հետզնման): Ընկերությունն օգտագործում է հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետզնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ՝ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Ընկերությունը կնքում է արժեթղթերի հետզնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի ամարկան՝ շուկայում

ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխանցվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

### **Ֆինանսական պարտավորություններ և բաժնային գործիքներ**

**Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը.** Ընկերության կողմից թողարկված պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային դրույթների էությունից և ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի սահմանումից:

**Բաժնային գործիքներ.** Բաժնային գործիքը ցանկացած պայմանագիրն է, որը վկայում է ընկերության ակտիվներում մասնակցության մնացորդի վերաբերյալ՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները՝ թողարկված ընկերությունների խմբի կողմից ճանաչվում են որպես ստացված հատկացումներ՝ առանց ուղղակի թողարկման գծով ծախսերը:

Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում է և նվազեցվում անմիջականորեն սեփական կապիտալից: Ընկերության կողմից իր իսկ բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ չեղարկման դեպքում շահույթում կամ վնասում օգուտ կամ վնաս չի ճանաչվում:

### **Ֆինանսական պարտավորություններ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված գուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է

նկարագրված եղանակով:

**Այլ ֆինանսական պարտավորություններ.** այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

**Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:



#### 4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

**Փոփոխություններ \$ՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:** Ընթացիկ տարում ընդունվել են/վերանայվել են հետևյալ ստանդարտները և դրանց մեկնաբանությունները, որոնք ազդեցություն են ունեցել սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

- Փոփոխություններ \$ՀՄՍ 10, \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 27 ստանդարտներում: Ներդրումային ընկերություններ:
- Փոփոխություններ ՀՀՄՍ 32 ստանդարտում: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում
- Փոփոխություններ ՀՀՄՍ 36 ստանդարտում: Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով
- Փոփոխություններ ՀՀՄՍ 39 ստանդարտում: Ածանցյալ գործիքների վերաձևակերպում և հեջային հաշվառման շարունակում
- \$ՀՄՄԿ 21. Տուրքեր

**Փոփոխություններ \$ՀՄՍ 10, \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 27 ստանդարտներում. Ներդրումային ընկերություններ:** \$ՀՄՍ 10-ում տեղի ունեցած փոփոխությունները սահմանում են բացառություններ ներդրումային ընկերության դուստր ընկերությունների համախմբան պահանջներից: Փոխարենը, ներդրումային ընկերությունից պահանջվում է դուստր ընկերություններում ունեցած մասնակցությունը չափել իր ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այս բացառությունը չի առնչվում ներդրումային ընկերության դուստր ընկերություններին, որոնք տրամադրում են ներդրումային ընկերության ներդրումային գործունեությանն առնչվող ծառայություններ:

Որպես ներդրումային ընկերություն որակվելու համար հաշվետու ընկերությունից պահանջվում է՝

- ձեռք բերել միջոցներ մեկ կամ ավելի ներդրողների կողմից՝ մասնագիտական ներդրումային կառավարման ծառայություններ տրամադրելու նպատակով,
- պարտավորություն ստանձնել ներդրող(ներ)ի հանդեպ առ այն, որ իր գործունեության նպատակը միջոցների ներդրումն է կապիտալի արժեքավորման կամ ներդրումային եկամուտ ստանալու կամ այդ երկուսի համատեղման միջոցով եկամտաբերության ապահովումն է, և
- չափել և գնահատել հիմնականում իր բոլոր ներդրումների կատարողականը իրական արժեքի սկզբունքով:

Համապատասխան փոփոխություններ են տեղի ունեցել \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 27-ում՝ ներդրումային կազմակերպությունների կողմից նոր բացահայտումների պահանջները արտացոլելու համար:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 32 ստանդարտում. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում:** ՀՀՄՍ 32-ը պարզաբանում է ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցմանը վերաբերող պահանջները: Մասնավորապես, այս փոփոխությունները պարզաբանում են այնպիսի

հասկացությունների նշանակությունը, ինչպիսիք են՝ «ներկայումս ունի հաշվանցման իրավաբանորեն գործադրելի իրավունք» և «միաժամանակյա իրացում և մարում»:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ, որոնք ենթակա են հաշվանցման:

**Փոփոխություններ ԶՅՄ 36 ստանդարտում. Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով:** ԶՅՄ 36 ստանդարտը ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքի հաշվանցման պահանջը սահմանափակում է այն ժամանակահատվածներով, որոնցում արժեքը կորուստը ճանաչվել է կամ հակադարձվել: Ավելին, դրանք ընդլայնում և պարզաբանում են բացահայտման պահանջները այն դեպքերում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքը որոշվել է իրական արժեքից հանած իրացման գին հիմունքներով: Նոր բացահայտումները ներառում են իրական արժեքի հիերարխիան, հիմնական ենթադրությունները և գնահատման տեխնիկան, որոնք համապատասխանում են ԶՅՄ 13 *Իրական արժեքով չափումներ* ստանդարտով պահանջվող բացահայտումներին:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի ֆինանսական գործիքներ, որոնք ենթակա են պահանջվող բացահայտումներին:

**Փոփոխություններ ԶՅՄ 39 ստանդարտում. Ածանցյալ գործիքների վերաձևակերպում և հեջային հաշվառման շարունակում:** Այս փոփոխությունները թույլ են տալիս շարունակել հեջային հաշվառումը այն դեպքում, երբ ածանցյալ գործիքը վերաձևակերպվում է քլիրինգային գործարքի կողմի վրա և բավարարված են որոշակի պայմաններ: Այս փոփոխությունով նաև պարզաբանվում է, որ վերաձևակերպման արդյունքում հեջավորման գործիք հանդիսացող ածանցյալ գործիքի իրական արժեքի ցանկացած փոփոխություն պետք է ներառվի հեջի արդյունավետության գնահատման և չափման գնահատման գործընթացում:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չի կիրառում հեջային հաշվառում:

**ԶՅՄԿ 21. Տուրքեր:** Այս մեկնաբանությունը կիրառելի է պետական մարմինների կողմից կիրառվող բոլոր տեսակի վճարումների գծով, բացառությամբ շահութահարկի, որոնք լուսաբանվում են ԶՅՄ 12 ստանդարտով, և բացառությամբ օրենքի խախտման դեպքում կիրառվող տույժեր և տուգանքների: Մեկնաբանությունը պարզաբանում է, որ տուրքերի վճարման պարտավորությունը պետք է ճանաչվի միայն այն դեպքում, երբ պարտադրող իրադարձությունը տեղի է ունեցել, և ուղղություն է տալիս այն մասին, թե արդյոք պարտավորությունը պետք է ճանաչվի առաջընթաց սկզբունքով որոշակի ժամանակահատվածի համար, թե ամբողջությամբ պետք է ճանաչվի կոնկրետ ամսաթվի դրությամբ:

Մեկնաբանությունը ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ Ընկերության քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների:

Ընկերությունը չի իրականացրել որևէ հրապարակված սակայն դեռևս չգործող ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառություն:

**Ջրապարակված, սակայն դեռևս չգործող ՋՄՍ-ներ**

Ֆոնդը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ստանդարտները, որոնք հրապարակվել են , սակայն դեռևս չեն գործում.

<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 19. Սահմանված հատուցումների պլաններ. Աշխատակիցների հատկացումներ</li> <li>• ՋՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ</li> <li>• ՋՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ</li> </ul>	<p>Գործում է 2014թ. հուլիսի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՋՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ</li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• ՋՄՍ 14. <i>Հետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներ</i></li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 16 և ՋՄՍ 38 ստանդարտում: <i>Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում</i></li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 27 ստանդարտում: <i>Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում</i></li> </ul>	<p>Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 16 և ՋՄՍ 41 ստանդարտում: <i>Գյուղատնտեսություն: Բերքատու բույսեր</i></li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 11 ստանդարտում: <i>Համատեղ գործունեությունում մասնակցության հաշվառում</i></li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 10 և ՋՄՍ 28 ստանդարտում: <i>Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում</i></li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>• ՋՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ</li> </ul>	<p>Գործում է 2017թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՋՄՍ 9. Ֆինանսական գործիքներ</li> </ul>	<p>Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՋՄՍ 1 ստանդարտում: <i>Բացահայտման նախաձեռնության ծրագիր</i></li> </ul>	<p>Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>

**Փոփոխություններ ՋՄՍ 19 ստանդարտում: Սահմանված հատուցումների պլաններ.**

**Աշխատակիցների հատկացումներ:** ՋՄՍ 19՝ Աշխատակիցների հատուցումներ ստանդարտում տեղի ունեցած փոփոխությունները հստակեցնում են, թե ինչպես աշխատակիցների կամ երրորդ կողմերի հատկացումները, որոնք փոխկապակցված են

ծառայության հետ, պետք է վերագրվեն ծառայության ժամանակահատվածներին: Ավելին, փոփոխությունները գործնական կիրառություն են սահմանում այն դեպքում, եթե հատկացումների գումարները կախված չեն աշխատած տարիների քանակից. նման դեպքում հնարավորություն է ընձեռվում, սակայն ոչ՝ պահանջվում, նման հատկացումները ճանաչել որպես ծառայության արժեքի նվազեցում՝ այն ժամանակահատվածում, երբ մատուցվել է համապատասխան ծառայությունը:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի սահմանված հատուցումների պլան:

**ՖՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ**. ՖՅՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. ընթացքը ներառում է մի շարք ՖՅՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՅՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացությունների սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՅՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք տվյալ պայմանական վճարը ֆինանսական գործիք է համաձայն ՋՄՍ 39-ի կամ ՖՅՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն է:

ՖՅՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատադրումը Ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմին:

ՖՅՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՅՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՋՄՍ 39-ում և ՖՅՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց գեղջման չափման հնարավորության կասեցման, եթե գեղջման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՋՄՍ 16-ի և ՋՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն

հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամոտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը:

ՀՀՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու կազմակերպության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու կազմակերպությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ.** 2011-2013 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի զուտ հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառությունների շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 32-ի:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող Ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՀՄՍ 3-ի:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ.** 2012-2014 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող

ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ գործող դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՋՅՄ 7-ի փոփոխությունները տրամադրում են լրացուցիչ պարզաբանում այն մասին, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՋՅՄ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՋՅՄ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՋՅՄ 19-ի փոփոխությունները տրամադրում են պարզաբանում այն մասին, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների գեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՋՅՄ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՋՅՄ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՋՅՄ 14. Ջետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներ:** ՋՅՄ 14-ը թույլ է տալիս կազմակերպությանը, որն առաջին անգամ է ներդնում ֆինանսական ճշգրտությունների Միջազգային Ստանդարտները, շարունակել հաշվառել հետաձգված սակագնային ճշգրտումների հաշիվներում տեղի ունեցած փոփոխությունները, սակավաթիվ փոփոխություններով, ըստ նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի՝ ինչպես ՋՅՄ առաջին անգամ ընդունման դեպքում, այնպես էլ հետագայում ֆինանսական հաշվետվություններում:

ՋՅՄ 14-ի կիրառումը որևէ ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խուճբն առաջին անգամ ՋՅՄ ներդրում չի իրականացնում:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում:** ՀՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՀՀՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն ամ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում, երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրանց հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Ընկերությունը կիրառում է ուղիղ գծային մեթոդը իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 27 ստանդարտում. Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում:** ՀՀՄՍ-27 ում տեղի ունեցած փոփոխությունները թույլ են տալիս կազմակերպությանը՝ կիրառել բաժնեմասնակցության մեթոդը՝ որպես տարբերակ դուստր ընկերություններում, համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումները առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառման համար: Փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը: Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չի պատրաստում առանձին ֆինանսական հաշվետվություններ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41 ստանդարտներում. Գյուղատնտեսություն. Բերքատու բույսեր:** ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 41 ստանդարտներում տեղի ունեցած փոփոխությունները սահմանում են բերքատու բույս հասկացությունը և պանաչում, որպեսի բերքատու բույսի հատկանիշներ ունեցող կենսաբանական ակտիվները հաշվառվեն որպես հիմնական միջոց՝ համաձայն ՀՀՄՍ 16 ստանդարտի՝ ՀՀՄՍ 41 ստանդարտի փոխարեն: Բերքատու բույսի վրա աճող բերքը շարունակում է հաշվառվել որպես գյուղատնտեսական արտադրանք ըստ ՀՀՄՍ 41-ի: Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՀՀՄՍ 16 և 41-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ դրանց ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 11 ստանդարտում. Համատեղ գործունեությունում մասնակցության հաշվառում:** ՀՀՄՍ 11-ում տեղի ունեցած փոփոխությունները ուղեցույց են տրամադրում այն մասին, թե ինչպես հաշվառել համատեղ գործունեության ձեռքբերումը, որը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում ըստ ՀՀՄՍ 3-ի:

Մասնավորապես, այս փոփոխությամբ սահմանվում է, որ կիրառելի են \$ՀՄՍ 3-ով և այլ ստանդարտներով սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման համապատասխան սկզբունքները: Միևնույն պահանջը պետք է կիրառվի համատեղ գործունեության ձևավորման դեպքում, այն և միայն այն դեպքում, եթե գործող ձեռնարկատիրական միավորը հատկացվում է համատաղ գործունեության՝ վերջինիս մասնակցող կողմերից մեկի կողմից: Համատեղ գործունեություն իրականացնողը նաև պետք է բացահայտի համապատասխան տեղեկատվությունը ըստ \$ՀՄՍ 3-ի և ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար կիրառելի այլ ստանդարտների:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ \$ՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտում. Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում:**

Փոփոխությունները պարզաբանում են, որ ասոցիացված կազմակերպությանը կամ համատեղ ձեռնարկմանը ակտիվների իրացման կամ հատկացման դեպքում, կամ վերահսկողության կորստի դեպքում, եթե համատեղ վերահսկողությունը կամ նշանակալի ազդեցությունը պահպանվում է գործարքում, որում ներգրավված են ասոցիացված կամ համատեղ ձեռնարկումներ, օգուտի և վնասի ճանաչման չափը կախված է նրանից, թե արդյոք ակտիվները կամ դուստր ընկերությունը իրենցից ներկայացնում են ձեռնարկատիրական գործունեության միավոր՝ ինչպես սահմանված է \$ՀՄՍ 3-ում: Եթե ակտիվը կամ դուստր ընկերությունը իրենցից ներկայացնում են ձեռնարկատիրական գործունեության միավոր, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է ամբողջությամբ: Եթե ակտիվը կամ դուստր ընկերությունը իրենցից չեն ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության միավոր, ապա կազմակերպության օգուտի կամ վնասի մասը չի ներառվում ճանաչման մեջ:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

**\$ՀՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ:** 2014թ. մայիսին հրապարակվել է \$ՀՄՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: \$ՀՄՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՀՄՍ 18 *Հասույթ*, ՀՀՄՍ 11 *Կառուցման պայմանագրեր* և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՀՀՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ Ընկերությունը պետք է ճանաչի հասույթը՝ ներկայացնելով խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստն այն գումարով, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- Հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- Պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- Գործարքի գևի որոշում,



- Գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- Հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ կազմակերպությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՅՄՍ 15-ի, կազմակերպությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՅՄՍ 15-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ հասույթի ճանաչման գումարի և ժամկետների վրա: Սակայն նպատակահարմար չէ ՖՅՄՍ 15-ի ազդեցության վերաբերյալ որչամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

**ՖՅՄՍ 9. Ֆինանսական գործիքներ:** 2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՅՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՅՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին ՋՄՄԽ-ն թողարկեց ՖՅՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ: ՖՅՄՍ 9 նպատակ ունի փոխարինելու ՋՄՄ 39. *Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը* ստանդարտը:

ՖՅՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ բիզնես մոդելի, որով դրանք պահվում են, ինչպես նաև ըստ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի բնութագրերի: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: ՖՅՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «իրական արժեք այլ համապարփակ եկամտի միջոցով» հասկացությունը այն պարտքային գործիքների գծով, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով թե հավաքագրել պայմանագրային դրամական հոսքերը և թե վաճառել ֆինանսական ակտիվները, և որոնք ըստ պայմանագրի պայմանների բաղկացած են ֆինանսական ակտիվներից, որոնք առաջացնում են որոշակի ամսաթվերի դրությամբ դրամական հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միմիայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում՝ սկզբնական ճանաչումից հետո չափվելով իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՅՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են փոփոխման ոչ ենթակա որոշում

կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:

- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են նույն կերպ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն, սակայն առկա են տարբերություններ կապված կազմակերպության սեփական վարկային ռիսկի չափմանը վերաբերող պահանջների հետ: ՀՀՄՍ 9-ով պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող՝ իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում:
- **Արժեզրկում:** ՀՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեզրկված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Յեջային հաշվառում:** Ներկայացնում է հեջային հաշվառման նոր մոդել, որը նպատակ ունի սերտ համապատասխանությունն ապահովել կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հեջավորման ընթացքում գործադրվող ռիսկերի կառավարման գործընթացներին: Ըստ ՀՀՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Ընկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:
- **Ապաճանաչում:** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչման պահանջները շարունակելու են գործել ըստ ՀՀՄՍ 39:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՀՀՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՀՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական

պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՀՀՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում: Բացահայտման նախաձեռնության ծրագիր.** Այս փոփոխություններով պարզաբանվում են տեղեկատվության բացահայտման սկզբունքները: Ընդլայնվում է էականության սահմանումը: Այն սահմանում է տվյալների ընդհանրացման և տարանջատման պահանջները, պարզաբանում է, որ էականությունը կիրառելի է ֆինանսական հաշվետվությունների բոլոր բաժինների վրա, և անգամ այն դեպքերում, եթե ստանդարտներով պահանջվում է առանձնահատուկ բացահայտումների գծով էականության չափանիշների կիրառում: Ստանդարտը նաև ավելի ընդլայնված ուղեցույցներ է պարունակում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների հերթականության վերաբերյալ:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 5. Ռիսկերի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, վարկային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր է խաղում Ընկերության հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Ընկերության համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Կառավարիչն ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Կառավարչի գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

Պարտքային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով, տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները, ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ Ընկերությունը և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ, գործառնական

միսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (մատակարարներ, գործընկերներ) գծով առաջանալիք միսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերների հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից Ընկերության ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Կառավարչի գործունեությանը բնորոշ են միսկեր: Հետևաբար, չնայած միսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև միսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Ընկերությունը կարող է անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ միսկերի առաջացման արդյունքում:

#### **ա. Ֆինանսական միսկերի կառավարում**

Ֆինանսական միսկերն այն միսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական միսկն իրենից ներկայացնում է շուկայական միսկը (ներառյալ՝ տոկոսադրույքի միսկը, արտարժույթի միսկը և այլ գնային միսկերը, վարկային միսկը և իրացվելիության միսկը): Ֆինանսական միսկի կառավարման գործառնական առաջնային նպատակն է՝ սահմանել միսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ միսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

#### **Պարտքային միսկ**

Պարտքային միսկը կորստի միսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, ապահովագրողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: Ընկերությունը կրում է պարտքային միսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր պարտքային միսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ընկերությունը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետզման պայմանագրեր (ռեպո պայմանագրեր), կամ զնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետզման պայմանագրեր): Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետզման և վերավաճառքի պայմանագրերը, Ընկերությանը թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ընկերությունը պատասխանատու է պարտքային միսկի վերահսկողության համար և պատասխանատու է Ընկերության պարտքային միսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի

գնահատում, պարտքային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Ղեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և պարտքային ռիսկը կառավարելու նպատակով կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի ամբողջական կիրառելի, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ. դեկտեմբերի 31</b>	<b>2013թ. դեկտեմբերի 31</b>	<b>Երկիր</b>	<b>Վարկանիշ</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,485	1,915	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	46,857	127,014	Հայաստան	Չվարկանշված
Պահանջներ բանկերի նկատմամբ Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացվելիք միջոցներ	-	100,855	Հայաստան	Չվարկանշված
Այլ ակտիվներ	147,969	-	Հայաստան	Չվարկանշված
	234	66	Հայաստան	Չվարկանշված
	<b>198,545</b>	<b>229,850</b>		

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են ֆինանսական ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

### Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Ընկերությունը իրացվելիության լրացուցիչ մակարդակ է ապահովում՝ օվերնայթ կանխիկ միջոցներով և կարճաժամկետ ներդրումներով, դրանով իսկ ապահովելով օրական ֆինանսավորման կարիքները և զուտ ակտիվների աճը փայտերերի համար: Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել Էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Ընկերության քաղաքականությունը և ներդրումային կառավարչի մոտեցումը իրացվելիության կառավարմանը կայանում է նրանում, որպեսզի Ընկերությունը ունենա բավարար իրացվելիություն պատրավորությունների կատարման, ներառյալ՝ փայերի մարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում՝ առանց Ընկերության վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

Ստորև ներկայացված աղյուսակում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով

Նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարությունը տնօրինում է արժեթղթերի պորտֆել, որն իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների և փայերի մարման արտահոսքերն ապահովելու համար: Ըստ ղեկավարության գնահատականի ֆինանսական պարտավորությունների չգեղձված հոսքերը եապես չեն տարբերվում ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված տվյալներից և լրացուցիչ չեն ներկայացվում:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31					Առանց ժամկետայնության
	Հաշվեկշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարիտայնության	
<b>Ֆինանսական ակտիվներ</b>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,485	3,485	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	46,857	-	-	-	-	46,857
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացվելիք միջոցներ Այլ ակտիվներ	147,969 234	147,969 234	- -	- -	- -	- -
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>198,545</b>	<b>151,688</b>	-	-	-	<b>46,857</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Այլ պարտավորություններ	2,937	2,937	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>2,937</b>	<b>2,937</b>	-	-	-	-
<b>Չուղղորդված</b>	<b>195,608</b>	<b>148,751</b>	-	-	-	<b>46,857</b>

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31					Առանց ժամկետայնության
	Հաշվեկշռային արժեք	Մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարիտայնության	
<b>Ֆինանսական ակտիվներ</b>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,915	1,915	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	127,014	127,014	-	-	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	100,855	855	-	100,000	-	-
Այլ ակտիվներ	66	66	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>229,850</b>	<b>129,850</b>	-	<b>100,000</b>	-	-
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Հետգնման պայմանագրեր	30,726	30,726	-	-	-	-
Այլ պարտավորություններ	57	57	-	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>30,783</b>	<b>30,783</b>	-	-	-	-
<b>Չուղղորդված</b>	<b>199,067</b>	<b>99,067</b>	-	<b>100,000</b>	-	-

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն Ընկերության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունն իրականացնում է իր ներդրումային գույքի կառավարում ըստ գործիքների և օրական կտրվածքով:

**Տոկոսադրույքի ռիսկ**

Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են Ընկերության փայտերերի տարիքային խմբին և փայերի մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսաբեր ակտիվները ֆինանսավորվում են առաջին հերթին Ընկերությանը բաժանորդագրվելու միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են ոչ տոկոսակիր ֆինանսավորման աղբյուրներ: Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Երբ տեղի է ունենում տոկոսադրույքների անկում, Կառավարիչը կարող է փորձել մեղմել այդ անկման բացասական ազդեցությունը՝ ավելացնելով ներդրումային պորտֆելում ակտիվների մարման ժամկետները՝ ակտիվի եկամտաբերությունը անփոփոխ թողնելու նպատակով: Ստորև ներկայացված է տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով:

	2014թ. դեկտեմբերի 31					Ավելի	Ոչ
	Հաշվե- կշռային արժեք	1 ամսից պակաս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	քան 5 տարի	տոկոսակիր
<b>(հազար դրամ)</b>							
<b>Ֆինանսական ակտիվներ</b>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,485	3,485	-	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	46,857	-	-	-	-	-	46,857
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացվելիք միջոցներ	147,969	-	-	-	-	-	147,969
Այլ ակտիվներ	234	-	-	-	-	-	234
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>198,545</b>	<b>3,485</b>	-	-	-	-	<b>195,060</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>							
Այլ պարտավորություններ	2,937	-	-	-	-	-	2,937
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>2,937</b>	-	-	-	-	-	<b>2,937</b>

2014 թ. դիցմբ	195,608	3,485	-	-	-	-	192,123
<b>2013թ. դեկտեմբերի 31</b>							
	<b>Հաշվե- կշռային արժեք</b>	<b>1 ամսից պակաս</b>	<b>1-ից 6 ամիս</b>	<b>6-ից 12 ամիս</b>	<b>1-ից 5 տարի</b>	<b>Ավելի քան 5 տարի</b>	<b>Ոչ տոկոս ակիր</b>
<b>(հազար դրամ)</b>							
<b>Ֆինանսական ակտիվներ</b>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,915	1,915	-	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	127,014	-	3,342	9,687	78,420	-	35,565
Պահանջներ բանկերի նկատմամբ	100,855	855	-	100,000	-	-	-
Այլ ակտիվներ	66	-	-	-	-	-	66
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>229,850</b>	<b>2,770</b>	<b>3,342</b>	<b>109,687</b>	<b>78,420</b>	<b>-</b>	<b>35,631</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>							
Հետգնման պայմանագրեր	30,726	30,726	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	57	-	-	-	-	-	57
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>30,783</b>	<b>30,726</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>57</b>
<b>2014 թ. դիցմբ</b>	<b>199,067</b>	<b>(27,956)</b>	<b>3,342</b>	<b>109,687</b>	<b>78,420</b>	<b>-</b>	<b>35,574</b>

Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և զուտ ակտիվների զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազային կետով (բկ, 0.01%) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2014 և 2013թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31		2013թ. դեկտեմբերի 31	
	Շահույթ կամ վնաս	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
Տոկոսադրույքի 100 բկ զուգահեռ աճ	28	28	4,331	4,331
Տոկոսադրույքի 100 բկ զուգահեռ նվազում	(28)	(28)	(4,331)	(4,331)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են միջին տոկոսադրույքները տոկոսակիր գործիքների գծով՝ հիմք ընդունելով Կառավարչի վերանայած հաշվետվությունները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների ժամկետայնությունից ելնելով դրանց եկամտաբերության մոտավոր պատկերը՝

Տարեկան % արտահայտությամբ	2014թ. դեկտեմբերի 31		2013թ. դեկտեմբերի 31	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
<b>Տոկոսակիր ակտիվներ</b>	-	-	11.42%-14.90%	10.25%
<b>Տոկոսակիր պարտավորություններ</b>	-	-	9.85%	-

**Արտարժույթի ռիսկ**

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ընկերության գործառնական արժույթով չեն պահվում:



Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ենթարկված չէր արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը:

**բ. Գործառնական ռիսկ**

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը:

**գ. Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունը ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին:

**դ. Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում**

**Տեխնոլոգիական և գործառնական ռիսկեր**

Ընկերությունը ենթակա է տեխնոլոգիական և գործառնական ռիսկերի, որն իրենից ներկայացնում է Կառավարչի, նրա մատակարարների կամ նրան ծառայություն մատուցող կողմերի վերահսկողության ընթացակարգերում կամ տեխնոլոգիական համակարգերում առկա թերությունների արդյունքում հնարավոր կորուստները, որոնք սահմանափակում են տեղեկատվության հավաքագրման, մշակման և հաղորդակցման հնարավորությունը, իր սեփական, ինչպես նաև փայտտերերի գործարքները արդյունավետ և անխափան իրականացնելու հնարավորությունը: Այս ռիսկը նաև ներառում է մարդկային սխալի, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, համակարգչային վիրուսների, տեղեկատվական հարձակումների, ահաբեկչության, ինչպես նաև բնական աղետների ռիսկը:

Ընկերության գործառնությունները մեծապես պայմանավորված են իր տեխնոլոգիական համակարգերի ամբողջական և անխափան գործունեությունից և հաջողության գրավականը մասնավորապես նաև կայանում է տեխնոլոգիաների ժամանակին բարելավումներով՝ հաշվի առնելով հաճախորդի հետզհետե փոփոխվող կարիքները: Ընկերության համակարգերի խափանումների, սխալների կամ անսարքության դեպքում, գործառնությունները կարող են զգալի բացական ազդեցություն կրել: Գործունեության նման խափանումներից խուսափելու համար, Ընկերությունը վարում է կրկնօրինակման և տվյալների վերականգնման գործառնություններ, այդ թվում՝ տվյալների կրկնօրինակման և հաղորդակցության ապահովման միջոցներ, ինչպես նաև իրականացնում է աղետների դեպքում տվյալների վերականգնման ստուգումներ:

Գործառնական ռիսկը մեղմացնող հսկողական մեխանիզմներ մշակման և ներդրման համար առաջնահերթ պատասխանատվություն է կրում ղեկավար անձնակազմը: Կառավարիչն ունի տվյալների հետ աշխատանքի ստանդարտները կարգավորող քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք անդրադառնում են թե ներքին տեղեկատվությանը, աշխատակիցների

անձնական տվյալներին, և թե ոչ հանրային սեփականություն հանդիսացող՝ հաճախորդի տվյալներին: Տվյալների անվտանգության գծով անցկացվում են կանոնավոր վերապատրաստումներ:

Անկախ ռիսկերի կառավարման աշխատանքներից, ոչ միշտ է հնարավոր կանխել կամ կանխարգելել տեխնոլոգիական կամ գործառնական գործընթացների խափանումները, ինչպես նաև կեղծիքի կամ այլ խեղաթյուրումների հավանականությունը, հետևաբար՝ Կառավարչի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները ոչ բոլոր դեպքերում կարող են արդյունավետ լինել: Ընկերության կարող է ենթարկվել դատական հայցերի, կրել վնասներ և կանոնակարգային պատժամիջոցների ենթարկվել, և կարող են ստիպված լինել բավականաչափ միջոցներ ներդնել խոցելի կետերը և այլ ռիսկերի արդյունքները մեղմելու և վերականգնելու ուղղությամբ:

### **Կարգավորման ռիսկեր**

Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Ընկերությունը ենթակա է կառավարական, վերահսկող մարմինների (մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության) կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Կառավարիչը նաև ենթակա է կարգավորիչ կամ կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պատավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայատման ինչպես նաև կեղծիքից պաշտանվածության ընդհանուր դրույթներին:

Ղեկավարությունը զգալի ներդրում է կատարել իր գործունեությանն առնչվող տարաբնույթ իրավաբանական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ: Չնայած օրենսդրական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ կատարված քայլերին, առկա են մի շարք ռիսկեր, մասնավորապես այն մասով, որ կանոնակարգային դաշտը կարող է լինել ոչ հստակ կամ կանոնակարգող մարմնի կողմից կարող են վերանայվել դրանց կիրառման ցուցումները: Կանոնակարգող մարմնի կողմից Կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձանց, աշխատակիցների, պաշտոնատար անձանց հանդեպ ցանկացած հարկադրանք կարող է հանգեցնել տույժերի, տուգանքների, դադարեցման կամ չեղյալ հայտարարման հրամանների, հարկադիր գործողությունների, կասեցման կամ լիազորությունների դադարեցման, կամ այլ կարգապահական միջոցների գործադրմանը, ընդհուպ մինչև գործունեության սահմանափակումը: Նշվածներից ցանկացածի պարագայում Ընկերության վարկանիշը կարող է վնաս կրել և դա կարող է բացասաբար ազդել գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա: Պահանջների հետ համապատասխանության բացակայության արդյունքում կարող են կիրառվել զգալի դրամական և ոչ դրամական պատժամիջոցներ:

## **6. Ֆոնդերի կառավարման գործունեությունը**

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրությամբ, Ընկերության ֆոնդերի կառավարման

գործունեությունն իրենից ներկայացրել է երեք ֆոնդերի կառավարում, որոնք գործարկվել են 2014թ. ընթացքում: Ընդհանուր վաստակած եկամուտը կազմել է 3,820 հազար դրամ (2013թ.՝ 422 հազար դրամ)՝ հաշվարկված համապատասխան ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:

## 7. Տոկոսային եկամուտ և տոկոսային ծախս

(հազար դրամ)	2014թ. .	2013թ..
<b>Տոկոսային եկամուտ</b>		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7,764	15,152
Պահանջներ բանկերի նկատմամբ	7,404	11,743
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացվելիք միջոցների գծով տոկոսային եկամուտ	7,027	-
<b>Ընդամենը տոկոսային եկամուտ</b>	<b>22,195</b>	<b>26,895</b>
<b>Տոկոսային ծախս</b>		
Չետզնման պայմանագրեր	1,220	3,901
<b>Ընդամենը տոկոսային ծախս</b>	<b>1,220</b>	<b>3,901</b>

## 8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ

(հազար դրամ)	2014թ.	2013թ..
Դիվիդ, զուտ	12,154	2,628
Իրական արժեքի փոփոխություն	(1,709)	20,447
<b>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ</b>	<b>10,445</b>	<b>23,075</b>

## 9. Կոմիսիոն եկամուտ

Վաստակած կոմիսիոն եկամուտն իրենից ներկայացնում է 2013թ. ընթացքում գործարկված երեք ֆոնդերի փայերի թողարկման դիմաց ստացված վճարը: Ընդհանուր կոմիսիոն եկամուտը 2014թ. կազմել է 11,972 հազար դրամ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 195 հազար դրամ)՝ հաշվարկված հիմք ընդունելով համապատասխան ֆոնդերի թողարկված փայերի արժեքը:

## 10. Վարչական ծախսեր

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	2013թ. դեկտեմբերի 31
Աշխատակիցների հատուցումներ	25,462	27,072
Գործառնական վարձակալության գծով ծախս	9,525	6,000
Մասնագիտական ծառայություններ	5,500	4,530
Շահութահարկից բացի՝ այլ հարկեր	3,680	2,224
Մաշվածություն և ամորտիզացիա	1,537	773
Կոմունալ և այլ գրասենյակային ծախսեր	1,218	658
Կապ և հաղորդակցություն	991	863
Այլ	2,344	486
<b>Ընդամենը վարչական ծախսեր</b>	<b>50,257</b>	<b>42,606</b>

## 11. Շահութահարկ

(հազար դրամ)	2014թ.	2013թ..
Ընթացիկ հարկային ծախս	-	-
Ջետաձգված հարկի գծով օգուտ/(ծախս)	(396)	426
<b>Ընդամենը՝ շահութահարկի գծով (օգուտ)/ ծախս</b>	<b>(396)</b>	<b>426</b>

Ընկերությունը չափում և հաշվառում է իր ընթացիկ շահութահարկը և և հարկվող բազան իր ակտիվներում և պարտավորություններում՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության պահանջների, որոնք կարող են տարբեր լինել ՀՀՄՍ պահանջներից:

Ընկերությունը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների՝ որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև՝ որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:

Ջետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները: 2014թ. և 2013թ. ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներին/ժամկետներին, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ:

ՀՀ հարկային օրենսդրության համաձայն շահութահարկի դրույթաչափը կազմում է 20%, որն էլ օգտագործվել է ստորև համեմատության նպատակներով:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31		2013թ. դեկտեմբերի 31	
(Վնաս)/ շահույթ/(մինչև հարկումը	(2,949)		3,974	
Հարկման դրույթաչափով հաշվարկված հարկ	(590)	(20.00%)	795	20.00%
Չհարկվող եկամուտ	297	10.07%	-	-
Չնվազեցվող ծախսեր	(103)	(3.49%)	(369)	(9.29%)
<b>Շահութահարկի գծով (օգուտ)/ ծախս</b>	<b>(396)</b>	<b>(13.42%)</b>	<b>426</b>	<b>10.71%</b>

Ստորև ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետաձգված հարկային ակտիվների/(պարտավորությունների) վերլուծությունը:

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2013թ. դեկտեմբերի 31	Շահույթում կամ վնասում ճանաչված	2012թ. դեկտեմբերի 31
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	520	(25)	545	402	143
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	(57)	57
Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանին փոխանցված հարկային վնասներ	1,514	(1,179)	2,693	2,251	442
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>2,034</b>	<b>(1,204)</b>	<b>3,238</b>	<b>2,596</b>	<b>642</b>
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>					
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	3,022	(3,022)	(3,022)	-
Դեբիտորական պարտքի մնացորդներ	(1,422)	(1,422)	-	-	-
<b>Ընդամենը՝ հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(1,422)</b>	<b>1,600</b>	<b>(3,022)</b>	<b>(3,022)</b>	<b>-</b>
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)</b>	<b>612</b>	<b>396</b>	<b>216</b>	<b>(426)</b>	<b>642</b>

## 12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	2013թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ	3,485	1,915
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>3,485</b>	<b>1,915</b>

## 13. Պահանջներ բանկերի նկատմամբ

Ընկերությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել բանկերում ներդրված ավանդներ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկերում ունեցած ավանդները իրենցից ներկայացրել են ՀՀ դրամով գնանշված ավանդ տեղական բանկերում՝ մեկ տարի մարման ժամկետով՝ 12 % տոկոսադրույքով և 100,000 հազար դրամ անվանական արժեքով:

## 14. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	2013թ. դեկտեմբերի 31
<b>Պարտքային գործիքներ</b>		
ՀՀ պետական արժեթղթեր	-	118,207
Փայեր ֆոնդերում	46,857	8,807
<b>Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ</b>	<b>46,857</b>	<b>127,014</b>

Ֆոնդերի փայերում ներդրումները իրենցից ներկայացնում են փայեր ԿԱՄավոր 1, ԿԱՄավոր 2 և ԿԱՄ ՊԱՖ ֆոնդերում՝ համաձայն Ընկերության ներդրումային կառավարման: Այս փայերը ներկայացվում են ֆոնդերի ակտիվների զուտ արժեքում Ընկերության մասնաբաժնով հաշվետու ամսաթվի դրությամբ:

## 15. Հիմնական միջոցներ

(հազար դրամ)	Համակարգիչներ	Վարձակալվող ակտիվների վրա կապիտալացվող բարելավումներ	Գրասենյակային գույք	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>				
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	263	-	-	263
Ավելացումներ	4,844	4,954	906	10,704
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5,107</b>	<b>4,954</b>	<b>906</b>	<b>10,967</b>
Ավելացումներ	334	-	35	369
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5,441</b>	<b>4,954</b>	<b>941</b>	<b>11,336</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>				
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
Մաշվածության գծով ծախս	501	165	86	752
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>501</b>	<b>165</b>	<b>86</b>	<b>752</b>
Մաշվածության գծով ծախս	774	247	170	1,191
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,275</b>	<b>412</b>	<b>256</b>	<b>1,943</b>
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>				
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,166	4,542	685	9,393
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,606	4,789	820	10,215
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	263	-	-	263

## 16. Այլ ակտիվներ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	2013թ. դեկտեմբերի 31
Կանխավճաններ	2,463	2,456
Այլ	330	161
<b>Ընդամենը այլ ակտիվներ</b>	<b>2,793</b>	<b>2,617</b>

## 17. Բաժնետիրական կապիտալ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 210,000 հազար ՀՀ դրամ (2013թ՝ 210,000 ՀՀ դրամ), որն իրենից ներկայացնում է 21,000 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ արժողությամբ: Համաձայն Կանոնադրության, հայտարարված բանետոմսերի քանակը կազմում է 30,000 հատ բաժնետոմս՝ 10,000 ՀՀ դրամ արժողությամբ: Սովորական բաժնետոմսերը տնօրինողները իրավունք ունեն ստանալ հայտարարված շահաբաժիններ և ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք: Հաշվետու ամսաթվի դրությամբ, բաժնետիրական կապիտալի 100%-ի սեփականատեր էր հանդիսանում Կապիտալ Ինվեստմենթս ՓԲԸ-ն: Ընկերությունը ենթակա է կապիտալի համարժեքության պահանջներին, որը համաձայն գործող օրենսդրության, կազմում է 200,000 հազար ՀՀ դրամ (2013թ՝ 200,000 հազար ՀՀ դրամ):

## 18. Այլ պարտավորություններ

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31	2013թ. դեկտեմբերի 31
Հաշվեգրված ծախսեր	1,500	1,000
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	1,129	1,725
Այլ	1,437	58
<b>Ընդամենը այլ պարտավորություններ</b>	<b>4,066</b>	<b>2,783</b>

## 19. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մայր ընկերությունը, գլխավոր բաժնետերերը, կառավարվող ֆոնդերը, Ընկերության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական վերահսկողություն իրականացնում է պրն. Տիգրան Կարապետյանը:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31		
	Բաժնետերեր և մայր ընկերություն	Հիմնական ղեկավար անձնակազմ	Կառավարվող ֆոնդեր
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>			
Կառավարման միջնորդավճարներ	-	-	3,820
Ղեկավար անձնակազմի վարձատրություն՝ ներառված վարչական ծախսերում	-	(10,408)	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ (վնաս)	12,231	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացվելիք միջոցների գծով տոկոսային եկամուտ	7,027	-	-
Կոմիսիոն եկամուտ	4,224	-	-
Տոկոսային ծախս հետզնման պայմանագրերի գծով	(1,220)	-	-
Կոմիսիոն ծախս	(120)	-	-

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացվելիք միջոցներ	147,969	-	-
Այլ ակտիվներ	131	-	-
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր	-	(533)	-

Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացվելիք միջոցներն իրենցից ներկայացնում են մայր ընկերությունից ստացման ենթակա գումարներ՝ կապված ՀՀ կառավարության պարտքային գործիքների վաճառքի հետ: Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ այս ստացման ենթակա գումարները վճարված են եղել:

(հազար դրամ)	2013թ. դեկտեմբերի 31		
	Բաժնետերեր և մայր ընկերություն	Հիմնական ղեկավար անձնակազմ	Կառավարվող ոլ ֆոնդեր
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>			
Կառավարման միջնորդավճարներ	-	-	422
Ղեկավար անձնակազմի վարձատրություն՝ ներառված վարչական ծախսերում	-	(12,120)	-
Տոկոսային ծախս հետզնման պայմանագրերի գծով	(3,901)	-	-
Կոմիսիոն ծախս	(108)	-	-
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>			
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրացումից ստացվելիք միջոցներ	(98)	-	-
Ռեեստրի վարման ծառայությունների գծով կրեդիտորական պարտքի կանխավճար	(36)	-	-
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր	-	(1,178)	-

Ղեկավարության վարձատրությունը տարվա համար կազմել է 14,008 հազար դրամ (2013թ.՝ 15,725 հազար դրամ):



## 20. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և բացահայտումները պահանջում են որ իրական արժեքը որոշվի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների համար: Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս: Սակայն, հաշվի առնելով սուբյեկտիվ դատողությունը և անորոշությունները, իրական արժեքը չպետք է համարվի անմիջապես իրացվելի՝ ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Որոշակի այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ղեկավարությունն օգտագործում է Ձեռչված դրամական հոսքերի մեթոդը՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեղթերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ գործիքի համար, գումարած արժույթի, գործիքի ժամկետայնության, պայմանագրային կողմի պարտքային ռիսկերը, և այն ունի հետևյալ տեսքը:

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերար-հիմնական խիս	Գնահատման տեխնիկա(ներ) և մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
---	--	-----------------------------------	---	-------------------------------	--

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Փայեր ֆոնդերում	46,857	Մակարդակ 2	Համապատասխան ֆոնդերի գուտ ակտիվների արժեքը՝ ըստ ֆոնդերի կողմից հրապարակված տվյալների	կ/չ	կ/չ
-----------------	--------	------------	--	-----	-----

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
ՀՀ պետական և կառավարական պարտքային արժեթղթեր	118,207	Մակարդակ 2	Ձեռչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեթղթերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված պետական եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 7.95% - 10.96% միջակայքում:	կ/չ	կ/չ
Փայեր ֆոնդերում	8,807	Մակարդակ 2	Համապատասխան ֆոնդերի գուտ ակտիվների արժեքը՝ ըստ ֆոնդերի կողմից հրապարակված տվյալների	կ/չ	կ/չ
	<b>127,014</b>	-	-	-	-

Ղեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա ֆինանսական գործիքները դասակարգելիս՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման մուտքային տվյալների նշանակությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական չափման համեմատությամբ: 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31թ դրությամբ տեղի չեն ունեցել փոփոխությունների մակարդակ 1-ից դեպի մակարդակ 2 կամ հակառակը:

**Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, որը չի չափվում շարունակական հիմունքներով իրական արժեքով (թեև պահանջում է իրական արժեքով բացահայտում).** Բացի ստորև նշված աղյուսակի, ֆոնդի կառավարչի կարծիքով ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հավելյալային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

(հազար դրամ)	31 դեկտեմբերի, 2014թ.		31 դեկտեմբերի, 2013թ.	
	Չափվելիչոային արժեք	Իրական արժեք	Չափվելիչոային արժեք	Իրական արժեք
Չակադարձ հետգնման պայմանագրեր	147,969	147,969	-	-

(հազար դրամ)	31 դեկտեմբերի, 2014թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Չակադարձ հետգնման պայմանագրեր	-	147,969	-	147,969

Մակարդակ 1, 2 և 3 կատեգորիաներում ներառված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվել են համընդհանուր ընդունված գնահատման մոդելներով՝ հիմնվելով զեղչված դրամական հոսքերի վերլուծության վրա, ընդ որում ամենաեական մուտքային տվյալները զեղչատոկոսներն են, որոնք արտացոլում են պայմանագրային կողմերի պարտքային ռիսկերը: